



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ  
ԱՆՎԱՆԻ ԵՐԳՉՈՒՀԻ ԼՈՒՍԻՆ ԱՄԱՐԱՅԻՆ՝  
ՆՐԱ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ  
ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԵՐԳՉՈՒՀԻ ԼՈՒՍԻՆ ԱՄԱՐԱՅԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ԴՍԵՐ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻՍՄՆԻ

Նիւ-Եոքք


Աստուծոյ ողորմութեամբ, երգի ազնիւ արուեստը մեր ժողովուրդին բաշխուած շնորհներէն մին հանդիսացած է ի սկզբանէ, երբեմն շուայօրէն իր վառ արտայայտութիւնը գտնելով բացառիկ անձնատրութեանց կեանքին մէջ:

Այդ շնորհալիներու հոյլին կը պատկանիք նաև Դուք, որ երկար տարիներէ ի վեր պայծառ աստղի մը նման կը փայլիք ամերիկեան մեծ երկրի գեղարուեստական փառատր անդաստանի բարձունքներուն վրայ, իբրև տաղանդաշատ մեծակատար երգչուհի համաշխարհային հռչակ վայելող Մեթրոփոլիթըն օփերայի, արդար հպարտութիւնը հանդիսանալով ամերիկահայ ամբողջ մեր ժողովուրդին:

Արդ, ընդատաջելով թեմակալ առաջնորդ գերաշնորհ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի ջերմատատ միջնորդագրին, այսու Մեր կոնդա-

կով արտանց կ'ողջունենք՝ բարձր արունատին նուիրում Ձեր քսաննօինգ տարիներու սքանչելի վաստակը և Մեր շնորհատրանքի հետ Ձեզի կը բերենք Մեր հայրապետական օրհնութիւնը, բարի մաղթանքով, որ միշտ քաջատողջ ու խանդավառ, շարունակէք Ձեր ազնի ստաքելութիւնը, միշտ փայլուն յաջողութիւններով, Ձեր լուսաշող համբաւով ուրախացնելով մեր երաժըշտասէր ժողովուրդը ի Հայաստան և ի սփիտս աշխարհի:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կրնդակս ի 17-ն մայիսի  
 1976 փրկչական ամի,  
 եւ ի տումարիս հայոց ՌԻՆԵ,  
 ի մայրաւանս սրբոյ Էջմիածնի  
 ՀՄՐ. 839

